Այգաբաց

Այգաբաց բնակավայրի վարչական տարածքը կազմուում է 1857.10 հա, իսկ բնակչությունը 721 մարդ: Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում, բլրապատ հարթավայրում՝ ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա: Գտնվում է մարզկենտրոնից՝ 10 կմ հարավ-արևելք:Գյուղատնտեության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Բնակչությունը զբաղվում է հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են ոռոգման ցանցի վերակառուցումը, մշակույթի տան վերանորոգումը, ներբնակավայրային ճանապարհների բարեկարգումը, լուսավորության ցանցի ընդլայնումը, Հայրենական Մեծ պատերազմի հուշարձանի վերանորոգումը: Այգաբացում կանգուն է XIX դարի Սուրբ Գևորգ եկեղեցին: Ունի դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, գրադարան: